Անգլիացիների համար Ղարաբաղի, ինչպէս և Զանգեզուրի ճակատագիրը որոշուած էր. նրանք վճռել էին այդ հողամասերը միացնել Ադրբէջանին: 1919թ. յուն. 15-ին, Ադրբէջանի կառավարութիւնը զօր. Թոմսընի հաւանութեամբ, Ղարաբաղ—Զանգեզուրի ընդհանուր-նահանգապետ նշանակեց դր. Խոսրով բէգ Սուլթանովին, որը հայերի աչքին հայատեացի և ջարդարարի համբաւ էր վայելում: Այդ լուրն առնելուն պէս, յուն. 26-ին, Հայաստանի արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանը վճռական բողոք ուղարկեց Ադրբէջանի կառավարութեան՝ յայտարարելով, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանի անբաժան մասն են:

Այս բողոքին Ադրբէջանի կառավարութիւնը պատասխանեց, որ խնդրի առարկայ եղող «շրջանները Ադրբէջանի անվիճելի և անխախտ մասն են կազմում» և որ «ընդհանուր-նահանգապետութիւն հաստատելու որոշումը ոչ մի դէպքում չի խախտում Հայաստանի հողային իրաւունքները: Ընդհակառակը, Հայաստանի կառավարութեան բողոքը մենք համարում ենք խախտում մեր դերիշխանութեան և մեր ներքին գործերին միջամտելու փորձ»:

Մի քանի շաբաթ յետոյ, փետր. 24-ին, Հայաստանի կառավարութիւնը ստացաւ բրիտանական դերագոյն կոմիսարի Երևանի ներկայացուցիչ զօր. Վ. Ասբրից զօր. Ֆորեստիէ-Ուօկերի մէկ գրութիւնը, որով հաղորդում էր զօր. Թոմսընի կողմից, թէ, «դր. Սուլթանովը գնում է Շուշի, իբրև ընդհանուր-նահանգապետ Զանգեզուրի, Շուշիի և Ղարաբաղի շրջանների: Նա այդ անում է առանց դնելու որև է պահանջ Ադրբէջանի ապագայ վարչութեան վերաբերմամբ. նա գնում է այնտեղ միայն օրէնքը և կարգը պահպանելու համար»: Արտ. գործ. նախարար Ս. Տիգրանեանը անմիջապէս պատասխանեց զօր. Ֆորեստիէ Ուօկերին, թէ՝ «Հայաստանի կառավարութիւնը չի կարող զօր. Թոմսընի հեռագրի հաղորդելու փաստը համարել արտայայտութիւն նոյնիսկ անուղղակի ճանաչման Ադրբէջանի կառավարութեան թէկուզ ժամանակաւոր դերիշխանութեան իրաւունքի դր. Սուլթանովի իշխանութեանը ենթարկուելիք գաւառների վիճելի շրջանների վրա»:

Զօր. Թոմսընի կարգադրութեան հետ չէր կարող հաշուել և Ղարաբաղի ազգաբնակութիւնը: Կամենալով անգլիացիների ներկայութեամբ հանդէս բերել ղարաբաղցիների հաւաքական կամքը՝ Ժամ. Խորհուրդը, փետր. 12-ին, հրաւիրեց համազարաբաղցիական 4րդ համագումարը, որը մի անգամ ևս որոշեց՝ Ղարաբաղը համարել Հայաստանի անբաժան մաս, ո՛չ մի դէպքում չճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը և մերժել ադրբէջանեան կառավարութեան պահանջը՝ ուղարկելու խորհրդարանի պատգամաւորներ: Բացի այդ, համագումարը ընտրեց ազգային խորհուրդ և յանձնեց նրան որոշումների գործադրութիւնը:

Փետրուարի վերջերին Շուշի եկաւ անգլիական նոր ներկայացուցիչ մայոր Մաք Մեկենը 400 զինուորներով: Նրա հետ եկան և զօր. Թոմսընի և ադրբէջանեան կառավարութեան համաձայնութեամբ Բաղուի Հայոց Ազգ. Խորհրդի և Հ. Յ. Դաշնակցութեան Կենտ. Կոմիտէի ներկայացուցիչներ